Արձանագրություն N4

«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/13» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի աճուրդի արդյունքների ամփոփման նիստի

ք. Երևան

30 հոկտեմբերի 2018թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավագյան, Ս. Սարգսյան, Վ. Քեռյան, Ա. Խուդինյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան

1. Աճուրդի մասնակիցների կողմից ներկայացվող հայտերի վերաբերյալ

«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/13» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետը տեղի է ունեցել ս. թ. հոկտեմբերի 26-ին ժամը 11:00-ին:

2. էլեկտրոնային աճուրդը սկսելու վերաբերյալ

էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտը ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը՝ ս. թ. հոկտեմբերի 29-ին ժամը 11:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և էլեկտրոնային հասցեները

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Էլ. հասցե
1	«Հրաշք այգի» ՍՊԸ	info@hrashkaygi.am

4. Տվյալներ՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով «Հրաշք այգի» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը որոշեց, որ վերջինիս հայտը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Մասնակցի առաջարկած գինը

Չափաբաժին	Ընկերություն	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Նախահաշվային գներ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«Հրաշք այգի» ՍՊԸ	5400417	1080083.4	6480500.4	5400417	1080083.4	6480500.4	**7000000**

6. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց՝ Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Հրաշք այգի» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետով համակարգի միջոցով ծանուցել «Հրաշք այգի» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

8. ՀՀ ԿԱ պետական եկամուտներ հարցում ներկայացնելու վերաբերյալ

Ղեկավարվելով Կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 05.11.2018թ. ժամը 11:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Վ. Թորոսյան

անդամներ՝ _____ Ա. Ավագյան

_____ Ս. Սարգսյան

_____ Վ. Քեռյան

_____ Ա. Խուդինյան

Քարտուղար՝ _____ Ա. Գրիգորյան